Նրանց տանում էին հեռու կառափնարան.
Լուռ էր Վարուժանը, Սիամանթոն խոհուն,
Հայացքն ուղղած դեպի երկինքը անսահման
Կանգնել էր Կոմիտասն ինչպես տաճարի սյուն:

Ջուլվել էր նա կարծես կապույտ երեկոյին,
Ծովի պաղ հովերով մորուքն ալեծածան,
Նրա շուրթերը պաղ արդեն երգում էին
Հայոց պատարագի հուզիչ «Տեր ողորմյան»:

Երգում էր նա... Եվ հորդ շիթերն արտասուքի
Թափվում էին երգի հնչյունների նման,
Երգում էր նա... Եվ այդ հույսի, աղերսանքի
Մեղեդին էր նրա սիրտ-փանքը միայն...

Երգում էր նա... Ծորուն հնչյունները երգի
Ջուլվում էին ծովի մրմունջներին օդում.
Երգում էր նա... Ափին կանգնած ժողովրդի
Սրտից աղոթաձայն հառաչանք էր պոկում:

Նավը շարժվեց: Դանդաղ պոկվեց արդեն ափից,
Բռնած անհայտ ու մութ հեռուների ճամփան.
Ու տարածվում էր դեռ օդում աղերսալից
Հայոց պատարագի հուզիչ «Տեր ողորմյան»:

. . . . . .

Եվ հեռացավ, կորավ ծովի մշուշներում,
Ու խավարին ձուլվեց հույսի «Տեր ողորմյան»:
Քամին նրա վերջին հնչյուններն էր բերում
Ծովի ցայտող ջրի պաղ շիթերի նման:

. . . . . .

1943, 7, VII

ՀԱՄՕ ՍԱՀՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Քո երգերի մեջ գութանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Սիրավոր լոր է ու Սոնա յար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ:

Մոր լցված աչքը որդու գալուն է,
Շեմքի քարին է զրկված հարկի,
Ամպոտ երկինք է, ձյունոտ գարուն է,
Կուշ-կուշ արուն է օրոր հավքի:

Կրակի բոցը դանդաղ մարում է,
Մեռնող սրտի պես թույլ բաբախում,
Եվ կրակի մոտ տխուր մայում է
Մատաղի գառը վանքի բակում...

Ծանր նստել ու հոնքը կախել է
Տանտիրոջ տերը հոգսը խրթին:
Արևի շողքը երդից կաթել է
Ու փշրվել է թոնրի շրթին:

Ճաշթողի պահ է, սուփրան փռած է,
Քրտնած գավաթ է, համեմ ու հաց:
Դեզի շվաքում երեխի լաց է,
Դեզին թիկնած է հարսը շիկնած...

Լուսնյակ գիշեր է, կավե կտուր է,
Կավե սափոր է, կավե գավաթ:
Լացող սրտի մեջ լավի սարսուռ է,
Լավի կարոտ է, լավի հավատ...

Գաղթը մոտիկ է, բախտը հեռու է,
Հոգնած ճամփա է ու հոգնած ոտք:
Ցավն՝ անտակ, հույսը ցամաք առու է,
Խոսքերը լաց են, լացը՝ աղոթք:

Այսպես է երգը... Երգը հնչում է,
Ու ներշնչվում են ցամաք ու ծով,
Մի բուռ երգի մեջ ապրում, շնչում է
Անդարձ աշխարհն իր անցուդարձով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԲԵՅԹ՝ ԿՈՄԻՏԱՍԻՆ

Աշխարհի ծովը մտած դու հայոց մրմունչի գետ,—
Պանդուխտիի դու տուն բերող անուշ ծուխ հայրենի տան...

*
* *

Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն՝
Հայ ժողովուրդն այսքան բարձր չէր լինի,
Թե չլիներ հայ ժողովուրդն աշխարհում՝
Կոմիտասն էլ այսքան քաղցր չէր լինի:

ԵՐՎԱՆԴ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ

ՋԱՅՆԻ ՀՆՁՎՈՐ, ԿՈՄԻՏԱՍ...

Հայոց աշխարհի լեռներեն դաժան
Եվ դիվաբնակ մըթին կիրճերեն,
Հայոց աշխարհի դաշտերեն ցրիվ,
Վարար գետերեն, լիճերեն բյուրեղ,
Առասպելատիպ սուրբը սևասքեմ
—Ձեռքին՝ մագաղաթ, ակո՜ս ինգագիծ—
Անխոնջ տիտանի քայլերով կանցնի՜,
Կշրջի՜ անվերջ և ամենուրեք,
Մատներով լուսեղ Ջայներ կհնձե...:
Ու գուրգուրանքով ինձածն այդ շրքեղ
Լայն մագաղաթին վըրա ակոսված
Ջուգահեռներուն մեջը կամբարե՝
Որպես գալիքին բացվող գանձարան...:
. . . . . .

Առաքելակերպ Սուրբը սևազգեստ
—Ձեռքին՝ մագաղաթ, ակո՜ս ինգագիծ—
Կհասնի աճա դաշտերուն ցրիվ...
Մատներով կախարդ՝ կհնձե՜ Ջայներ...
Ճոռինչը խոփին գուղձեր ցանցընող,
Բառաչը եզին լուծին ընտանի,
Ժըպիտը ծիլին արևուն բացվող
Եվ կշռույթն ալիք ցորյանի ծովին,

Ծիրանի ծաղկին շշունչը մեղմիկ,
Եվ այգեկութքի խինդը երգեցիկ:

Սիրտն ըրած մագնիս՝ սրտերեն Հայոց
Լույսին կբերե, որպես վերջին գանձ,
Սիրտերն անտունի, դնդերներն անհաղթ
Սիփանա քաջաց, հավատքն հարության,
Որ դարձած աղոթք—մարդեն Մարդ—
Աստծուն—
Կհասնի երկինք՝ որպես պատարագ...

Շուրթին՝ պատարագ, սրտին՝ սերն հողին,
Ձեռքերուն սեղմած մագաղաթն իր գանձ,
Հսկան ձայնաքաղ, հսկան Կոմիտաս
Կու գա հոն ծունկի հավերժաբընակ
Օշականցիին դամբանին առջև,
Եվ իր լուսագիծ մագաղաթն անծալ
Կընծայե Անոր որպես տուրք արյան.
—Դուն Հայոց երկրի բարբառին տըվիր
Հավերժին տանող ոտքեր երկաթյա,
Եվ այդ բարբառին թևերուն տըվին
Երկինքներ տանող խոյանքը Ջայնի...

1969 թ. Բեյրութ